

**5.8. ՀՀ տարածքի 2004թ. սեպտեմբեր ամսվա
հիդրոոդերևութաբանական պայմանները**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, սեպտեմբերին օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, տեղ-տեղ՝ նորմայից 1 աստիճանով ցածր:

Ամսվա սկզբին օդի ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-3 աստիճանով՝ պայմանավորված հյուսիս-արևմուտքից ցուրտ օդային հոսանքների ներխուժմամբ, սեպտեմբերի 6-8-ին և 11-14-ին օդի ջերմաստիճանը կտրուկ նվազել է (10-12 աստիճանով), օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 5-7 աստիճանով:

Նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում, Լոռիում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է $-2 +3^{\circ}\text{C}$ (Աշոցքում /Շիրակի մարզ/ -5°C), Արարատյան դաշտում և Տավուշում՝ $+5 +9^{\circ}\text{C}$, Սյունիքի հովիտներում՝ $+10 +15^{\circ}\text{C}$:

Սեպտեմբերի 14-ից սկսած օդի ջերմաստիճանն աստիճանաբար բարձրացել է՝ սեպտեմբերի 19-20-ին հավասարվելով նորմային: Ամսվա վերջին տասնօրյակին օդի օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 3-5 աստիճանով:

Ամսվա առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է սեպտեմբերի 1-2-ին, 9-10-ին և 23-30-ին՝ Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ $+32 +36^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $25-27^{\circ}\text{C}$, Լոռիում, Տավուշում ջերմաստիճանը բարձր է եղել ամսվա վերջին՝ $+25 +30^{\circ}\text{C}$:

Ամսական տեղումների քանակը Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնի լեռնային շրջաններում նորմայից ավել է եղել և կազմել է նորմայի 95-161%-ը, Արարատյան դաշտում, Սյունիքում, Շիրակում, Վայոց ձորում և Գեղարքունիքի առանձին շրջաններում այն պակաս է եղել նորմայից և կազմել է նորմայի 5-65%-ը:

Սեպտեմբերի առաջին կեսին հանրապետությունում գրեթե ամենուրեք դիտվել են անձրև և ամպրոպ:

Սեպտեմբերին առանց տեղումների եղանակ դիտվել է ամսի 9-11-ին և ամսվա երկրորդ կեսին՝ 15-30-ին:

Սեպտեմբերի 2-ին, 3-ին Ապարանում (Արագածոտնի մարզ), 3-ին Վանաձորում (Լոռու մարզ) դիտվել է կարկուտ:

Սեպտեմբերի առաջին կեսի առանձին օրեր Երևանում, Ապարանում, Արմավիրում, Ուրցաձորում ու Արարատում (Արարատի մարզ), Գավառում ու Սևանում (Գեղարքունիքի մարզ) դիտվել է քամու ուժգնացում: Քամու արագությունը հասել է 14-19 մ/վրկ, պոռթկումները՝ 23 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են իրենց նորմաների մոտավորապես 100-120%-ը:

Սևանա լճի մակարդակն իջել է 10 սմ-ով և 2004թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 1897.77 մ, որն 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 46 սմ-ով: